Եւ Ի–իս՝ օր Կիրակի տօն Եկեղեցւոյ, զդուռ Տաւուղթ փաչային բանալ ետուն գիշերով և բերին զկաթողիկոսն, և իբրև մերձ եղև ի կամարն Սուրբ Գէորքայ՝ ի վերև բաղնեացն, յայնժամ Եղիազար վարդապետն ելեալ եկեղեցոյն ընդ առաջ նորա, որ և ես չնչինս և տրուպս ամենեցուն կայի առ պապոյն իմ Մղտեսիւն ի Եաղուպենցն աւթեցեալ՝ թէ զդալ նորա լուեալ ելանիցեմք ընդ առաջ։ Եւ զձայնն լուեալ մեր, որ վարդապետն ել ընդ առաջ խնկօք և մոմեղինօք, դպրօք և սարկաւագօք զգեստաւորեալ[1]), զանկակաւ և ծնծղայիւք, քահանայիւք և անթիւ ուխտիւք։ Եւ վարդապետն առաջի երթայր յերկու ձեռսն կերոն մոմ անվառ և զամբոխն հարկանէր յառաջ երթալ, զի մի նեղեսցեն զկաթողիկոսն, որ կային յերկու կողմն յանցս ճանապարհին մինչև ի դրունս եկեղեցոյն, մի ի վերայ միոյ անկեալ դեգերեալ կային, զի համբուրեսցեն զաջ կաթողիկոսին և կամ միայն տեսցեն զնա։ Այլ սա ոչ թողոյր, երթայր յառաջ և հարկանէր կերոնաւն զամենեսեան՝ մինչ յեկեղեցին մղելով, որ և մի ոգի ոչ համբուրեցին կամ տեսին։ Եւ ի ձայնէ չարականին և ծնծղային յայնմ սահմանացն այլազգիքն ի մի վայր գումարեալ կային ի ճանապարհս, որ և զնոսին հալածեաց զարնելով՝ մինչ ի դրսի բակ եկեղեցոյն, որ ասի մէյտան։ Եւ մուծաք յեկեղեցին և ասացին զժամն, և զպատարագն մեծ Ոհան վարդապետն արար։ Եւ յետ պատարագին նստել ետուր զկաթողիկոսն և լըւաց զոտս նորա և զջուր լւացմանն ըռահան ծաղկով ի վերայ ժողովրդեանն ցանէր, որք գային մի մի և զոտսն համբուրէին՝ անթիւ և անհամար ժողովուրդք եկեալ ի Զ եկեղեցւոյ քաղաքիս։ Եւ դպիրք և սարկաւագ, քահանայք և վարդապետք յաջմէ և յահեկէ

1) սգեստաւորեալ։